

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԿՈՎԿՈՍԵԱՆ ՅՕՔԵԼԻՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԹԻՓԼԻՍՈՒՄ

Անցեալ տարի, երբ մօտենում էր վրաստանը Ռուսիայի հետ միանալու հարիւրամեալ տարեդարձը, Թիֆլիզում մտածման առարկայ եղաւ այն հարցը՝ թէ ինչ եղանակով տօնուրաւ պատմական և մեր երկրի համար շատ մեծ նշանակութիւն ունեցող յօբելանը: Եւ ի միջի այլոց արժարժուեց նաև այն լաջող միտքը, թէ հետաքրքրական կլինի տեսնել, թէ Կովկասի ազգաբնակչութիւնը սրբան լառաջադիմութիւն է արել ալը հարիւր տարուալ ընթացքում. բայց ինչ կերպով կարելի էր ցոյց տալ զանազան ազգութիւններից բաղկացած մի ամբողջ ժողովրդի քաղաքակրթական լառաջադիմութիւնը, որ շատ բազմակողմանի տարրերից է կազմուած: Հարկաւ ցուցանանդէսը ամենից լաւ միջոցն էր ալը նպատակին հասնելու համար. երկրի և ժողովրդի գիւղատնտեսական և արդիւնարեբական աստարիզում ցոյց տուած լառաջադիմութիւնը կարող է ցոյց տալ և նորա քաղաքակրթութեան աստիճանը:

Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութիւնը լանձն առաւ ալը դժուար գործը ու կարճ ժամանակի ընթացքում կազմակերպեց «Կովկասեան յօբելեանական գիւղատնտեսական ու արդիւնարեբական ցուցանանդէսը», որ թէև իբրև շտապով կատարուած գործ՝ մեծ թերութիւններ ունեցաւ և մինչև անգամ նիւթական վնաս պատճառեց գիւղատնտեսական ընկերութեանը, այնուամենայնիւ պարզ կերպով ցոյց տուեց՝ թէ սրբան մեծ տարբերութիւն կալ կովկասեան ազգերի ալժմեան նիստ ու կացի, սովորութիւնների, պահանջների, դպրոցական գործի, գիւղատնտեսութեան և արդիւնարեբութեան ասպարիզում ցոյց տուած ջանքերի և սրանից հարիւր տարի առաջ գոյութիւն ունեցող նահապետական պարզ բարբերի ու երկրի և արդիւնքի մշակութեան տարրական եղանակների մէջ:

Բացի լիչեալ հարիւրամեակից, այս տարի լրանում էր նաև «Կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութեան» գոյութեան լիսնս մեակը. ուստի և ընկերութեան ղեկա-

վարներն ամեն ջանք ի գործ դրին՝ հասարակութեան առաջ պարզերես զուրս գալու: Կազմուեց ցուցահանդէսը կազմակերպող վարչութիւն, որի պատուոյ նախագահն եղաւ Երկրիս կառավարչապետ իշխան Գալիցիներ. իսկ գլխաւոր վարչութեան նախագահն եղաւ իշխան Պ. Գրուզինսկին, Կովկասեան Կալսերական գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահը: Յուցահանդիսի կոմիտար ընտրուեց իշխան Անդրօնիկովը: Իսկ ամբողջ ցուցահանդէսն իւր բարձր հովանաւորութեան ներքոյ առաւ Նորին Կայսերական Մեծութիւն մեծ իշխան Միխայիլ-Նիկոլաւիչը-Կովկասի նախկին փոխարքան:

Յուցահանդէսը պաշտօնապէս բացուեց սեպտեմբերի 4-ին և մինչև նոյեմբերի մէկը ունեցաւ մօտ 160,000 այցելու. այսթիւն աւելի մեծ կլինէր, եթէ Քիֆլիղում այդ միջոցներին անձրեակին ու վառ եղանակ չլինէր:

Յուցահանդէսը բաղկացած էր հետևեալ 18 գլխաւոր բաժանմունքներէց. 1) երկրագործութիւն, 2) դինեգործութիւն, 3) այգեգործութիւն և բանջարեղէնի մշակութիւն 4) սլաւոնների մշակութիւն. 5) դարդի տեղ ծառայող բոսեր, 6) անասնապահութիւն, 7) ընտանի կենդանիներ, 8) կաթնատնտեսութեան և կենդանադահութեան արդիւնքներ, 9) շերամապահութիւն ու մեղրապահութիւն, 10) ձկան արդիւնք բերութիւնը և որսորդութիւն. 11) երկրագործական գործիքներ և մեքենաներ, 12) տնային և արհեստների արդիւնքներութիւն, 13) գործարանական արդիւնքներութիւն, 14) լեռնային, 15) մանկավարժական—արհեստգիտական 16) գիտական-ստատիստիկական 17) գիտական դպրոցական և 18) զեղարուեստական: Ի ցոյց կարող էին դրուիլ միմիայն կովկասեան երկրների արտադրութիւնները:

Յուցահանդէսի փառեայ շէնքը կառուցուեց այգեպահութեան դպրոցին կից գետնի վրայ ու մասամբ էլ նոյն իսկ այդ դպրոցի այգում. համարեմ թէ բոլոր բաժանմունքներն էլ զետեղուած էին գլխաւոր մեծ շէնքի մէջ. շէնքից դուրսն էին Քիֆլիղ ու Բազու քաղաքների սրահները, դպրոցական վարչութեան սրահը, Բազուի նախարդիւն բերական սրահը, Բազուի պանորաման, մի քանի մասնաւոր արդիւնքներողներ ի սրահներ և այլն:

Սմանից հարուստ բաժինը հարկաւ երկազործականն էր. որովհետև Կովկասեան երկրների աղգաբնակութեան աչքի ընկնող մեծամասնութիւնը երկրագործութեամբ է պարապում, այս բաժինը զսակարգերի կը բաժանուած ըստ նահանգների և ամենից ճոխը Սրահեան նահանգինն էր: Հացահատիկների մշակութիւնը և դորան վերաբերեալ գործիքները՝ թէ հին ասիական և թէ գլխաւորապէս նոր-Եւրոպական՝ աչքի էին ընկնում իրենց բազմութեամբ. հնձելու, կալսելու մեքենաները ու նոր ձեւի զութանները կամաց-կամաց տարածուում են մեր երկրում և մեր պատրանողական գիւղացիները հետզհետէ հա-

մուգում են, որ դրանց գործածութիւնն առաւել ձեռնառու է, քան իրանց հնադարեան գործիքները:

Հանդէս բերուած մեծաքանակ ու բազմատեսակ գինիներն ընտիր ընտիր պտուղների տեսակներն ապացոյց են՝ թէ վերջին ժամանակները մեր այդգործները մեծ ջանք են գործ դնում՝ ազնուացնելու պտղաբեր ծառերի տեսակները:

Տնայնագործութեան արդիւնքներից թէև շատ բան չկար ցուցահանդէսում, բայց եղածներն էլ ցոյց էին տալիս՝ թէ մեր երկրի մի քանի մասերում որքան նուրբ գործուածքներ են կարողանում արդիւնաբերել՝ ամենապարզ և հասարակ գործիքներով:

Կարողական-արհեստգիտական բաժանմունքում այնքան նեղուածք էր, որ դժուարութեամբ էր կարելի լինում մանրամասն դիտողութեան ենթարկել ի ցոյց դրուած աշակերտական աշխատանքի արդիւնք իրեղէնները, բայց և այնպէս մի քանի արհեստաւորաց և կար ու ձևի դպրոցների արդիւնքները լաւ տպաւորութիւն էին թողնում այցելուի վրայ: Տարաբաղաբար պէտք է նկատենք, որ ոչ Գէորգեան ճեմարանը, ոչ Ներսիսեան դպրանոցը և ոչ էլ մեր միւս թեմական դպրոցները ոչինչ չէին ուղարկել ցուցահանդէս. ս. էջմիածնի տպարանն ու հռչակաւոր մատենադարանն էլ ոչինչ չէին գետել ի ցոյց դնելու և հասարակութեան ցոյց տալու իրենց գործիւնքը:

Այցելուն պարզ և ամիոփ գաղափար էր կազմում նաև Բաղուի նաւթի արդիւնաբերութեան վրայ. նաւթի վիշկան, նաւթի հօր փորելու, նաւթ հանելու գործիքներն ու գործողութիւնները բազում չտեսնողին էլ լաւ դաղափար էին տալիս:

Հանքային ոչ շատ ճոխ ժողովածուները ցոյց էին տալիս մեր երկրի հանքային հարստութիւնը. քարածուխը, մարմարի տեսակները, պղինձը, աղը և այլն հետզհետէ պէտք է մեր անհող մնացած դիւղական դասակարգին ապրուստի միջոց տան, ինչպէս որ այժմ տալիս է նաւթի արդիւնաբերութիւնը:

1. Գեղարուեստական բաժինը նորնպէս աղքատ էր, և դաժների մէջ աչքի էին ընկնում նաև վարդգէս Մուրենսանցի մի քանի հայկական կեանքից նկարած լաջող պատկերները:

Ու Ռօբերտեանական ցուցահանդէսի ամենամեծ թերութիւններից մէկն էր աղգագրական նիւթերի ու տիպերի բացակայութիւնը. եղածն այնքան քիչ էր, որ օտարը դրանով երբէք զնդափար չէր կարող կազմել կողիասի բազմաթիւ ազգութիւնների ու նրանց կենցաղի մասին:

Չնայելով իւր թերութեաններին, կոմկլասեան լօբելիւսական ցուցահանդէսը մի որոշ պատկեր տուեց մեր երկրի տրտեսական ու արդիւնաբերական զարգացման և ցոյց տուեց, որ կոմկլասեան աղգերի մէջ առաջնակարգ տեղ են ըննում հայերը. ցուցահանդէսի առաջնակարգ մրցանակների մի խոշոր մասը ստացան հայերը:

ՀՅՅՈՑ ԹՄՏՐՈՆ

Նորակազմ դրամատիք ընկերութիւն: Նորա բանակցութիւնները: Ան-
յաջողութիւն և պատճառները: Իմրի անպաշտպան դրութիւն: Անյաջող
և յաջող ներկայացումներ: Բենեֆիտներ: „Նշգրիտ“ դրամա Երվանդա-
դէի: Բովանդակութիւնը: Մեր կարծիքը: Վերջորան:

Վերջապէս, տասնամեակ անտարբերութիւնից լետու,
Քիֆլիսի հայ ինտելիդենցիան, այսինքն նորա մի փոքր մասը
անցեալ դարնան սկզբներից սկսեց հետաքրքրուել հայ թատ-
րոնի ճակատադրով: Մի քանի թատերասէրների ձեռնբեցու-
թեամբ կազմուեց մի թատրոնական ընկերութիւն, որի նպա-
տակն էր մեր թափառական դերասանական խմբին միջոց
տալ իւր գործունէութիւնը կենդրոնացնելու Քիֆլիսում—այն
քաղաքում, որից դուրս նա չի կարողացել և երբէք չի կա-
րող բարոյապէս առաջադիմել:

Ամառուայ սկզբին ընկերութիւնը, ձեռքի տակ ունենա-
լով տեղական իշխանութեան հաւանութեանը արժանացած
կանոնադրութիւնը, սկսեց բանակցութիւն մի կողմից դերա-
սանական խմբի ցիրուցան անդամների, միւս կողմից Բազուի
թատրոնասէրների ոչ-պաշտօնական լանձնաժողովի հետ: Այդ
լանձնաժողովը, որ վերջին չորս տարիները նպաստում էր
խմբին նիւթապէս, չէր կարողացել հալ ըմբի դուրսութիւնը
հաստատ հիմունքների վրայ դնելու: Հարկուոր էր մի աւելի
հեղինակուոր հիմնարկութիւն, որպէս զի երկար տարիներ
վարկը կորցրած հալ թատրոնական գործը դնուէր ար-
ժանաւոր պատուանդանի վերայ: Այսպիսի մի հիմնարկութիւն
կարող էր լինել միմիայն Քիֆլիզում, և այս հիման վերայ նո-
րակազմ ընկերութիւնը բնականաբար ձգտում էր զեկաւար
մարմնի դեր կատարել: Իժբաղտաբար, բանակցութիւնը ցան-
կալի հետեանք չ'ունեցաւ, և խումբը ոչ միայն Քիֆլիզում
ձեռք չըբերեց հովանաւորութիւն, այլ և զրկուեց Բազուցի-
ների նիւթական աջակցութիւնից:

Հետաքրքրական են այդ անյաջողութեան հիմնական
պատճառները: Մեզ հասած տեղեկութիւնները ցոյց են տա-
լիս, թէ որքան մեծ դեռ տհաս ենք հասարակական գործե-
րում: Նորակազմ ընկերութեան ներկայացուցիչները դիմում
են Բազուի լանձնաժողովին առաջարկելով նորան՝ միանալ ի-
րանց հետ և խումբը պահել ընդհանուր ոլթերով: Յանձնաժո-
ղովը բանակցութիւնը լանձնում է թատրոնական գործին
միանգամայն անտեղեկ մի պարոնի: Այդ մարդու համար
թատրոնն այնքան մեծ նշանակութիւն է ունենում, որ նա
քարեհաճում է Քիֆլիզի ընկերութեան առաջարկութեանը
պատասխանել երեք ամիս լետու, այսինքն ամառուայ վերջին:
Այս մէկ պատճառ: Երկրորդ պատճառը լինում է դերասանական

խումբը: Գերասաններից ոմանք, լսելով, որ նորակազմ ընկերութիւնը ժողովել է մի քանի հազար բուրլի, արնպիսի մեծ պահանջներ են անում, որ բոլորովին չեն համապատասխանում ոչ իրանց բեմական ընդունակութիւններին, ոչ անցեալին և ոչ ներկային: Եւ, որ դարմանալի է, արդ մեծ պահանջները լինում են ոչ արնքան խմբի խոշոր ոլմերի, որքան արն անձանց կողմից, որոնց բեմական ձիրքերը կամ կասկածելի են կամ տակաւին անլայտ հալ հասարակութեանը: Երրորդ պատճառը նորակազմ ընկերութեան ընկերութեան ղեկավարների ոչ արնքան խոնկ վարմունքն է լինում: Տակար չէնց առաջին քալերից բացակայում է արդ մարդկանց ձեռնարկութեան մէջ, և այս արն պատճառով, որ ոմանք նրանցից զործի մէջ մտցնում են աղալութեան ոգի: Այսպէս, օրինակ, մեզ պատմել են ընկերութեան մի լրագորի կողմից մեր առաջնակարգ դերասաններից մէկին ուղղուած մի նամակի մասին, որի ձեռք աւանուաղը տարօրինակ պիտի համարել: Բանակցութեան արնպիսի եղանակ զործադրող ընկերութիւնը մոռացած է եղել, որ դերասանն էլ անհատ է և թէ նորա հետ չի կարելի խօսել ինչպէս մի սպասաւորի հետ:

Այսպէս թէ արնպէս, աշունն արդէն սկսուել էր, երբ դերասանական խումբը ղեռ չըղիւտէր ինչ է լինելու իւր ճակատագիրը 1901—1902 թ.թ. սեղօնին: Վերջապէս, նա լոյսը կորելով թէ Թիֆլիզի ընկերութիւնից և թէ Բագուի լանձնածոռովից, հարկադրուած եղաւ բեմը բանալ սեպական ոլմերով: Սակայն արդ արնքան էլ դիւրին բան չէր: Խումբը լոյս ունէր Թիֆլիզում ներկայացումներ տալ Արախտիք ընկերութեան թատրոնում, որ ունի հասարակութեան դրաւելու բոլոր լարմարութիւնները: Բայց լայտնուեց, որ արդ թատրոնը կասպալով վերցրել է ուսաց դրամատիքական մի խումբ տիկ. Վօլգինայի ղեկավարութեամբ: Կասպալաոու տիկին Վօլգինան հալ խմբից պահանջում է իւրաքանչիւր ներկայացման համար 350 բուրլի վարձ: Յայտնի բան է, դերասանական խումբը, շունենալով ոչ մի նիւթական երաշխաւորութիւն, դժուարացաւ արդ դումարը տալ, ուստի, երկու թէ երեք ներկայացում տալով Արախտիք ընկերութեան թատրոնում, շտապեց տեղափոխուել վրաց ազնուականների թատրոնը:

Թէ ինչ է վրաց ազնուականների թատրոն կոչուած չինութիւնը Թիֆլիզում—արդ ամենքին լայտնի է: Յուրտ դանլիճ, մշտական միջանցուկ քամի, նեղ անցքեր, անլարմար բեմ խղճալի ղեկօրասիծնով, ղգեատների կատարեալ աղքատութիւն—անա արն պայմանները, որոնց մէջ պիտի խաղար խեղճ խումբը: Թիֆլիզի հասարակութիւնը, որ զգում է մի անլաղթիլի ատելութիւն դէպի արդ թատրոնը, հարկաւ, չալցելեց հալ ներկայացումները, չընալելով, որ խումբը ճգնում էր դրաւել նորան արնպիսի էֆէքտաւոր պիեսներով որպիսին է, օրինակ. «Թագի համար» փքուն դրաման: Եւ խումբը սկսեց

ոչ միայն լուսահատուել, այլ և զգալ անխուսափելի քաղցածութեան բոլորը:

Աերջագէտ, նորակազմ ընկերութեան ղեկավարները զգացին, որ ամօթ է տասը տարի կանոնաւոր բնւ չունենալուց լեռոյ, թողնել մի վերին աստիճանի շնորհալի խումբ՝ ճակատագրի հաճութիւն, քանի որ դանձարանում կայ մի քանի հազար բուքլի հասարակական գրամադպար: Նրանք լանձն առան ծախքի մի մասը և, նշանակելով իւրաքանչիւր ներկայացման համար 150 բ. նպաստ, միջոց տուին խմբին ցոյց տալու իւր ձիրքը Թիֆլիզի հայ հասարակութեան:

Արզարե, վեց կանոնաւոր ներկայացումներով խումբը կարողացաւ ցոյց տալ իւր ուժերը: Ասում ենք վեց, որովհետեւ քանի տեղ չենք դնում ոչ վրաց թատրոնում և ոչ Հասարակական Ժողովարանում տրուած մի շարք ներկայացումները, որոնց արտաքին զայմաններն այնքան աննպաստ էին խմբի ձիրքերի կատարեալ արտալայտման համար: Այդ 6 ներկայացումներն էին, որ փրկեցին խմբին և նպաստեցին նորան Թիֆլիզի հասարակութեանը թողնել ամենալաւ տպաւորութեան տակ: Մեր բողոք տիկ. Սիրանուշի և պ. պ. Աբէլեանի ու Պետրոսեանի բենեֆիսներին, նաև «Համլէտի» Նեմիրովիչ—Պանչէնկոյի «Էկանքի արժէք» կամեղիպի և Եիրմանդադէի «Եղինէ» դրամալի մասին է. Տիկ. Սիրանուշը իւր բենեֆիսի համար ընտրել էր Երկրբի «Սուլէանի Կոյրը», պ. Աբէլեանը «Տրիլրի» անուանով թէև գրականական ու ղեղարուեստական արժէքից զուրկ, բայց վերին աստիճանի կֆէկտաւոր դրաման, իսկ պ. Պետրոսեանը իւր ուժերը փոխձելու համար Եէքստրիի «Վերքան» (և ոչ «Արքայ Լ» բ. ինչպէս անուանում է թարգմանիչ Մասէհեանը):

Երեք բենեֆիսներն էլ անցան լաջող նիւթականի կողմից, երեք անգամ էլ թատրոնը ծալրէիծալը լիքն էր, սակայն այն միակ բացառութեամբ, որ տիկ. Սիրանուշը բենեֆիսին օթեակների գրիթէ 1/3-ը դատարկ էր և հասարակութիւնը միայն այդ ևսկոյ ժլատ գտնուեց գոնէ մի փունջ ծաղկով չըպատուեայ ղերասանուհուն, մինչդեռ միւս բենեֆիսի ղիանտները ստացան պսակներ ու արժէքաւոր նո. էրներ: Մենք կը կամենալինք այս հանգամանքը վերադրել թատրոն աշխուղների անխուսափութեանը, որովհետև որքան մենք նկատեցինք տիկ. Սիրանուշը դեռ ևս վաղելում է նրանց դէթ մի մասի որոշ չափի համակրութիւնը:

Բացի բենեֆիսներից առանձին ուշադրութիւն դրուեցին տիկ. Սիրանուշի խաղը Համլէտի դերում և պ. Եիրմանդադէի «Էկանքի» դրամալի ներկայացումը: Համլէտը գրաւել էր թատրոն անողին հասարակութիւն այն շատ հասկանալի պատճառով, որ ամենքը հետաքրքրուած էին տեսնելու թէ ինչպէս է հասկացել և ինչպէս պիտի պատկերացնի մի հայուհի դանիական անմահ իշխանի բարդ փիլիսոփայական տիպը: Եւ ամենքը

եկան միևնույն եղրակացութեան, աչն է, թէ անգնական է կնոջը տեսնել տղամարդի դերում նույնչափ, որչափ անընական կըլինէր այ. Պետրոսեանին տեսնել Կամելիազարդ արկնոջ դերում և թէ աչն, ինչ որ ներքել է Սառա Բերնարի նման մի աշխարհահռչակ աստղի քմքին, չի կարելի ներել մի թէև անդանդով, բայց այնուամենայնիւ միջակ դերասանուհու. Տիկ. Միրանոյը, այդ հմուտ դերասանուհին չըկամեցաւ հասկանալ այդ բանը և լամառութեամբ շարունակում է կրկնել Համբէտի դերը: «Касний» լրագիրը հաղորդում է, որ նա արդէն կրկու անգամ Բագուսի դուրս է եկել այդ դերում և «ոչ մի անգամ հանդիսականների վրայ տպաւորութիւն չի գործել: Անկասկած պատկառելի դերասանուհին վերջիվերջոյ կըզգալ իւր սխալը և կըղաղարի թէ իւր ձիրքը աղաւաղել և թէ հասարակութեան քիչ թէ շատ նուրբ ճաշակ ունեցող մասի նեարդերը ի չարը գործ դնել:

Բուրբովին այլ տեսակի հետաքրքրութիւն էր շարժել Շիրվանդադէի «Եզինէ» դրամալի ներկայացումը: Այդ ներկայացման երեկոյ դուրսէն անգամ դերասանական խումբը թատրոնի սրահում տեսաւ Թիֆլիզի հայ ինտելլիգենցիային: Եւ այդ շատ հասկանալի էր: Մեծամասնութիւնը հետաքրքրուած էր աչն բանով, թէ որքան մի վիպասան լաջողել է դրամագրել: Յայտնի է, որ շատ քիչ վիպասաններ են դրամատիքական ասպարիզում լաջողութիւն ունեցել: Այլ է վէպը, այլ է բեմական գրուածքը և որչափ դրամատուրգի համար դժուար է վէպ գրելը, նույնչափ և վիպասանի համար դժուար է դրամագրելը: Իւրաքանչիւրը նրանցից ունի որոշ տեսակի ձիրք և տարիներ ընթացքում ձեռք բերած գրելու եղանակ, որոնց պլամանները կաշկանդում են գրողին և չեն թող տային մի ասպարիզից միւսն անցնել գոնէ սուանց ծանր աշխատանքի: Շատ վիպասաններ են փորձել դրամա գրել և մեծ մասը անլաջողութեան հանդիպել: Այս տեսակէտից, հարկաւ, հետաքրքրական էր տեսնել Շիրվանդադէին դրամատուրգի դերում:

Մի ուրիշ պատճառ որ գրաւել էր ինտելլիգենցիային, պիեսան ինքն էր իբրև նորութիւն: Նորա բովանդակութեան ու գաղափարի մասին հասարակութեան մի մասի մէջ պրտըտում էին թեր ու դժմ կարծիքներ: Բաւական ժամանակ էր, որ հալ բեմը նոր ինքնուրոյն պիէս չէր տեսել, այս էլ մի ուրիշ պատճառ ընդհանուր հետաքրքրութեան:

Ինչ և է, «Եզինէ» գրաւել էր մեծ բաղմութիւն մեր սուսում առած դասակարգի, որ հետաքրքրուած սպասում էր վարագործի բարձրանալուն:

Ահա «Եզինէ» թովանդակութիւնը: Մեծ արդիւնաբերական վաղաքում լայտնի վատտաբան Միհրան Ալվերդեանի սալօնում երեկոյան հաւաքուած հիւրերի մէջ խօսք է բացում մի դատարանական գործի մասին: Մի ոմն Արարալեան համալսարանականի երիտասարդ կինը մի օր խոստովանում է:

իւր ամուսնուն, թէ իւր անցեալը մաքուր չէ, թէ օրինորդ ժա-
 մանակ նա խաբուած ու մոլորուած է կղել մի անպիտան երի-
 տասարդից: Ամուսինը սկսում է առել կնոջը և հալածել:
 Հալածանքն այնքան ճնշում է թշուառ կնոջը, որ սա իւր
 կիսանքին վերջ է տալիս ինքնասպանութեամբ: Նորա մահից
 հետո գործը լայնուում է հասարակութեանը: Արաքաջեանը
 ենթարկուում է դատի իբրև կնասպան: Ահա այս դատի մասին
 է խօսում Ալվերդեանի սալօնում: Ալերջինս իբրև փաստա-
 ղան տեղեակ լինելով դատին, պատմում է նորա մանրամաս-
 նութիւնները: Եւ այդ միջոցին, հիւրերի ներկայութեամբ
 շփոթուում է նորա կինը Սեզինէն, պիեռի հերոսուհին: Նա ար-
 դէն առանց արն էլ լուզուած էր, դեռ կէս ժամ չի անցել, որ
 կարդացել է մի լրագրում Արաքաջեանի դատը: Ներկայ եղող-
 ներից մէկը, տիկ. Գալամքարեան, որ կասկածներ ունէ Սե-
 զինէի անցեալի մաքրութեան մասին, դիտմամբ շարունակում
 է խօսակցութիւնը Արաքաջեանի ինքնասպանութեան մասին:
 Նա հետաքրքրւում է իմանալ տղամարդ հիւրերի հայեացքը
 եղեռնագործութեան մասին և իւրաքանչիւրին հարցնում է՝
 արդեօք ինչպէս կը վարուէին եթէ իրանք լինէին կնասպան
 համարուած Արաքաջեանի տեղը: Երբ հերթը հասնում է Ալ-
 վերդեանին, Սեզինէն լանկարծ արձակում է մի ճիշ, լսելով
 իւր ամուսնու պատասխանը. «Եթէ ես լինէի, կը ներէի կնոջս
 անցեալի մեղքը»: Հիւրերը շփոթուում են: Շփոթուում է և Միհ-
 րան Ալվերդեանը: Ի՞նչ պատահեց: Սեզինէն հաւատացնում է
 նրանց, թէ կայծակից վախեցաւ և, իրաւ, այդ վարկենին
 լուում է ուժգին որոտում: Տիկ. Գալամքարեանի կասկածը
 սկսում է աւելի ու աւելի ամրանալ: Սեզինէն հիւրերի առա-
 ջարկութեամբ նուազում է դաշնամուր: Բայց նա լուղուած է
 չափադանց, նորա նեարդերը դաւաճանում են նորան: Չեռները
 թուլանում են, գլուխը թեքւում կրծքին: Նա գրեթէ ուշա-
 թափւում է: Դարձեալ ընդհանուր շփոթութիւն: Սեզինէն ուշ-
 քի է գալիս, ժողովում է ոլժերը, փորձում է հիւրերին զուար-
 ացնել մի ուրախ եղանակ նուազելով: Բայց ամենքը շուա-
 ւած են և հրաժեշտ են տալիս: Բեմի վերայ մնում է Սեզինէն:
 Չէր ամոսնու հետ: Այն ժամանակ ամուսինը հարց ու փորձի
 իրենթարկում Սեզինէին. արդեօք ինչ է պատճառը, որ վեր-
 ճին ամիսները նա այնպէս լուռ է, տխուր, մտախոհ: Սեզի-
 նէն նախ հրամարում է պատասխանից, ապա ամուսնուն
 հանդստացնելու համար հնարում է ինչ-որ հէքեաթ, որի մէջ
 նուրբ կերպով արտայայտում է իւր հոգու տուալտանքը: Նա
 հազիւ կարողանում է զսպել իրան, որպէս զի չը չոքի իւր
 ազնիւ, բարի ամուսնու առջև և չը խոստովանի, թէ ինքն էլ
 մի տիկին Արաքաջեան է, թէ իւր անցեալն էլ մաքուր չէ:
 Այս անգամ նա հասկացնել է տալիս Միհրանին, թէ ինքն
 իրան արմանի չէ համարում նորան և ճնշուած է նորա անսահ-
 ման բարութիւնից: Սակայն բարի Միհրանը ժպտում է ներո-

դամտաբար: Նա սիրում է Եւգինէին անսահման, համարում է նորան անողորակսն կին, մի կին, որ «ալնքան գրաւիչ է, ալնքան հրապուրիչ, որ մի քաղցր ժպտով ընդունակ է վարձատրելու ամուսնու բոլոր բարութիւնները»: Եւգինէն զգում է խղճի սուր խալթոց ալզ բաւերից. նորա տանջանքը հետզհետէ աւելանում է. Չեռները դնելով Միհրանի ուսերի վերայ, նալում է աչքերին և արտասանում լուզուած ձայնով. «որքան բարութիւն կայ ջո աչքերում . . . Իսկ Ես. . » ասում է և հեկեկալով վաղում ննջարան. Միհրանը ապշած նալում է ետեից. և արտասանում. «չեմ հասկանում»:

Այսպէս է վերջանում առաջին գործողութիւնը:

Երկրորդ գործողութիւնը կատարում է նոյն հիւրասենեկում: Եւգինէի խղճի խալթոցը հետզհետէ սաստկանում է. Յայտնուում է Գարրո Աղարեանը, ալն անձնաւորութիւնը, որ դրկել է Եւգինէին պատուից, լախշտակելով նորան 15 տարեկան հասակում, երբ դեռ միամիտ, կեանքի հրապուրներին անծանօթ օրիորդ էր: Մուրրիչը եկել է լանցաւոր լուսով վերականգնելու նախկին բարեկամական կապը Եւգինէի հետ, որ այժմ մի գեղեցիկ ու հրապուրիչ կին է: Եւգինէն, տեսնելով նորան, լուզում է ու վրդովւում անշափ: Տեղի է ունենում մի դիւալօզ, որ հանդիսականներին տանում է դէպի Եւգինէի անցեալը և ծանօթացնում նորա մուրրիչ բարոյական պատկերի հետ: Աղարեանը թողնում է իւր սնտախ լոյսերը և խղճահարուած ներումի է խնդրում Եւգինէից: Բալց արդէն ուչ է. Եւգինէն վճնդում է նորան իւր տնից և լուսահատ, ընկճուած, քայքայուած ընկղմուած է աթոռի վերայ ու դառնազին հեկեկում: Յետոյ սրբում է աչքերը և ուչքը ժողովում: Ներս է մտնում Միհրանը: Նա ուրախ է ու զուարթ. նա դատարանում տարել է մի խոշոր գործ, ազատել է շղթաներից մի անմեղ դատապարտեալ: Նա երջանիկ է և, համբուրելով սիրեցեալ ամուսնուն, լալտնում է, թէ պատրաստում է նորա հետ ճանապարհորդել Եւրոպա: Բացի դրանից, նա Եւգինէին նուիրում է արդիւնաբերական մի ընկերութեան մի քանի թանկագին բաժնետոմսեր: Նորա արտալալտած սէրը, անսահման հաւատը, անկեղծ զգուանքները վերջնականապէս ընկցեալը: Տանջուող և խղճի սուր խալթից տառապող կինը անկեղծ ու համարձակ լալտնում է ամուսնուն իւր անցեալի սխալը: Միհրանն ալնքան հաւատում էր նորա անմեղութեանը, որ այժմ իւր լսած չարագուշակ լուրը համարում է ցնորք: Սակալն Եւգինէն պնդում է իւր ասածը: Դժբաղդ Միհրանը առաջին վալրկենին ենթարկուելով սրտի գրգռին, լարձակւում է Եւգինէի վերայ տեղն ու տեղը խեղդելու նորան. Բալց իսկոյն լեա է կանգնում, գոչելով. «գազանը, գազանը պիտի զսպել»: Եւ հեկեկալով փաթաթւում է իւր քրոջ Մարթալի պարանոցին, իսկ Եւգինէն ընկնում է մօր դիրկը:

Նորոգ և վերջին գործողութիւնը մեզ տանում է դժբաղդ ամուսինների հոգեկան աշխարհը: Միհրանի մէջ սկսուել է սովակալի հոգեկան կռիւ: Կուտւմ են նորա մէջ երկու հակառակ զգացումներ: մի կողմից մի բարոյական բարձր գաղափար-ներուան գաղափարը և աէրը զէպի Եւգինէն, միւս կողմից ալն կսկծակի զխտակցութիւնը, որ սիրեցեալ կնոջ անցեալը մաքուր չէ: Նա սլաորաստ է ներել, բայց ինչպէս, չէ որ տանջոււմ է անսահման: Նորա քոյրը, այրի Մարթան, հասարակական կարծիքի մարմնացումը հաւատօցնում է նորան, թէ տղամարդը երբէք չի կարող մնալ անսպառիւմ: չէ որ կալ հասարակական կարծիք, իշնամիւնների չար խնդութիւն, բարեկամների գաղտնի արհամարհանք: Սակայն այս բոլորը արժէք չունին Միհրանի աչքում: Նա այրւում է միայն և միմիայն ներքին կրակից: Մարթան չի կարողանում նորան համոզել, որ Եւգինէից բաժանուի և վշտացած հեռանում է, լուսալուի, որ եղբայրը խելքի կը դալ: Գալիս է Եւգինէն: Նա վճռել է թողնել Միհրանին: Նա չի կարող տեսնել նորա տանջանքը, չի ուզում մնալ նորա շարիի տակ, վերջապէս, իրեաները չունի մնալու, որովհետեւ արժանի չէ իւր անպակասուած անցեալով: Բայց որքան, որքան սիրում է Միհրանին և որքան տանջում, որ պէտք է զրկուի նորանից: Միհրանը համաձայն չէ, որ Եւգինէն բաժանուի: Եւ ներում է նորան: Սակայն Եւգինէն ասում է «ներել կարելի է մոռանալով, իսկ դու մոռանալ իմ անցեալը երբէք չես կարող»: Միհրանի վճիռը անփոփոխ է: Հաստատուն է և Եւգինէի վճիռը: Թշուառ կիւր արդէն, վերջին հրաժեշտը տալով, քայլերն ուղղում է զէպի դռները: Այդ վայրկեանին լսում է դպեկի մեղմիկ «օրօրը», նա քնացնում է Միհրանի և Ն գինէի երեխային: Եւգինէն դողում է, մի վայրկեանում փակն ու վրայ են լինում նրա բոլոր գաղափարները: Բայց նա շատ է մտածել այս մասին: երեխան բարոյական օրէնքով պատկանում է Միհրանին, ուստի թողնում է նորա տունը: Եւ ուղում է դուրս գալ: Բայց ուշաթափւում է և ընկնում Միհրանի գիրկը: Ուշքի գալով, նա չօքում է ամուսնու առջև և ասում: «չեմ կարող, չեմ կարող»: Միհրանը զրկում է նորա գլուխը և արտասանում: «Համոզմունքով ներեցի, սիրելով կը մոռանամ»:

Վարագորն իջնում է, դրաման վերջանում: Հասարակութիւնը հեղինակին հրաւիրում է բեմ և բուռն ծափահարութիւններով արտալայտում իւր գոհունակութիւնը:

Պիեսի բովանդակութեանից ընթերցողը ինքը կը տեսնէ, որ դա մեր թատրոնական գրականութեան մէջ ներկայացնում է որպէս մի նորութիւն իւր մէջ արտալայտուած ներման գաղափարով: Քրիստոնէական բարձրագոյն գաղափարներից մէկն էլ լանդաւորին ներելն է, եթէ նա սրտանց զղջում է իւր ջանքանքը և ասլաշխարում: Եւգինէն երկար հողեկան տան-

լանքներից, նոյն է ապաշխարութիւնից լեռոյ՝ արժանի է ալը շնորհին:

Այս տեսակէտից մենք ողջունում ենք պ Միրովանզադէին, մանաւանդ որ բնական կողմից էլ պիտեւ ունի իւր առանձին առաւելութիւնները:

Մի ամլա խաղալով Արտիստիքական Ղնկերութեան թատրոնում, խումբը դնաց Բաղու և այժմ այնտեղ է ներկայացումներ տալիս: Իսկ Թիֆլիզի դրամատիքական ընկերութիւնը վճռել է առաջիկայ ձմեռ ամբողջ սեզոն խումբը պահել Թիֆլիզում: Կա, ի հարկէ, վերին աստիճանի գովելի միտք է: Թիֆլիզի նա հասարակութիւնը վաղուց է զգում մայրենի քեմի կարեւորութիւնը: Ապացոյց այն բուն սէրը, որով նա այցելում էր վերջին ներկայացումները: Մնում է միայն, որ ընկերութիւնը վաղորօք հոգալ թատրոնի մասին: Ապա պիտի հոգալ և խմբի ու յեր բարձրացնելու մասին: Խմբի այն կազմը, որ խաղաց այս անդամ, շատ թերի էր: Ճշմարիտ է, նա ունէր տիկ: Միրանուշի և պ: Աբէլեանի նման ոյժեր զօրեղ դրամատիքային դերերի համար, տիկ: Մայսուրեանի նման շնորհալի դերասանուհի նուրբ դրամատիքական դերերի համար, պ: Պետրոսեանի նման բարեխիղճ և աշխատասէր ոյժ, նաև Աւետեան ամուսինների նման անհրաժեշտ բնական ոյժեր, ճշմարիտ է, լաւ է իւր դերերում նաև պ: Ստեփանեան, ինչպէս և վատ չէ Ալիխանեան, սակայն այդքանը բաւական չէ: Պակասում են մի քանի տեսալ դերերի համար դերասաններ, մանաւանդ դերասանուհիներ: Պէտք է բեմը հարստացնել բացի տիկ: Մայսուրեանից, նաև մի քանի թարմ կանացի ոյժերով, պէտք է հրաւիրել օր. օր. Աղամեանին, Սունդուկեանին, նաև Գելէկեան քորերին:

Իսկ մեր կարծիքը ռեպերտուարի բարեկիրտութեան վերաբերմամբ կը լայտնենք միւս համարում:

Գ. Գ. Լրագրները հաղորդեցին մի ուրախալի լուր, այն է, մեր լայտնի դերասանուհի տիկ: Հրաչեան այնքան կազգուրուել է, որ կարող է բնմ դուրս դալ, ուստի մթադիր է առանձին լամբով կատարել մի արտիստիքական պտոյտ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Լուսնի վերայ գործող հրաբուխներ, 2) Փայտախա, 3) Տօշկաներկով թունաւորութիւն: 4) Մարդի ոստայնը արիւնը դաղալացնելու համար:

ՎՈՐՄՈՂ ՀՐԱՐՈՒՂԻՆԵՐ ԼՈՒՍՆԻ ՎԵՐԱՅ. Լուսինը վաղուց մարել է, սառել, զրկուել ջրից ու օդից, և այ-

ժրմ որպէս մի աննպատակ անկենդան քարի կտոր—սլանում է եթերակին սվկիրանոսում, սպասելով որ մի օր ընկնի գետնի վերայ և նորա հետ միասին արևի վերայ և միանալ այն ընդհանուր զանգուածի հետ, որից նա գոլութիւն է առել, որպէս մեր արեգակնային ընտանիքի մի անդամ։ Այս է ներկայ դարի և առհասարակ ժամանակակից աստղագէտների մեծագոյն մասի կարծիքը։ Բայց կային և այլ կերպ մտածողներ։—Նոքա կարծում էին, որ դեռ լուսինը բոլորովին մեռած չէ, և նորա վերայ գոլութիւն ունին գործող հրաբուլդներ։—Կոցա գոլութիւնը նոքա հիմնում էին այն լուսուտը և փալլուն կէտերի վերայ, որ նոցա լաճախ լաջողում էր տեսնել դիտակի օգնութեամբ, լուսնի վերայ։ Այդ մասին առաջին անգամ, XVIII դարում, լալտարարեց շեյվեցիոսը, փոքր լետոյ, այն է 1706 թ. Լախիբը լուսնի վերայ նկատեց կասկածաւոր կէտեր։ 1715 թ. մայիսի 5-ի խաւարման ժամանակ Լույկելը նկատեց մի քանի փալլուն կէտեր։ Սակայն նոցա դիտակներն անկատար էին, նոյնը չի կարելի ասել լալտնի աստղագէտ շերչելի մասին—որի կատարելագործուած հայելաւոր դիտակի նմանը ալմ էլ շատ քիչ կայ 1787 թ. նա հրատարակեց սլուսնի վրայի երեք հրաբուլդների մասին՝ գրուածքը, որի մէջ հաստատում է, որ ինքը իւր դիտակով լուսնի վերայ նկատել է երեք գործող հրաբուլդ և մատնանիչ է անում հէնց տեղը։ Չնայած լալտնի Արագոյի խիստ բողոքներին, այն գաղափարը, որ լուսնի վերայ կան գործող հրաբուլդներ, փոքր առ փոքր արմատ էր բռնում, սակայն ներկայ դարում սկսեց փոքր առ փոքր թուլանալ և լուսինը կրկին երկնային մեռած մարմինների կարգը դասեցաւ։ Բայց ահա կրկին ասպարէս եկան լուսնի հրաբուլդները։ Մեդոննայի (Ֆրանսիայում) աստղաբաշխական դիտարանի աստղագէտ Շարբոնոն Ֆրանսիական աստղաբաշխների ժողովում մի ղեկուցում կարդաց այն դարմանալի երեւոյթների մասին, որ նա պարզ կերպով նկատել է լուսնի վերայ դիտակի միջոցով 1897 թ. նորա ընկեր—Միլիօշան մի անգամ դիտակը ուղղեց դէպի լուսինը և զարմացած նկատեց, որ լուսնի Պոսիդոնիոս կոչուած խառնարանը (հրաբուլդի բերան)—ծածկում է ինչ որ սպիտակ ամպով կամ մէղդով։ Իսկոյն կանչեց Շարբոննին և առաջարկեց նայել դիտակում։ Վերջինս սաստիկ զարմացաւ, տեսնելով որ խառնարանը կիսով չափ ծածկուած էր ինչ որ ամպով։ Այդ բոլորը այնպէս էր երևում, որ կարծես թէ խառնարանը դռնում է ժալթքման վայրկենում—և ամպի կտորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հրաբուլդից դուրս եկած ծուխ և գոլորշիք, որ երբեմն նոսրանում էր և կրկին խտանում։ Այդ երեւոյթը կրկնում էր զրեթէ ամեն գիշեր—սկսած 1877 թ. մարտ ամսից, մինչև նոյն թ. հոկտ. վերջը։ Ուրեմն կարծել թէ—դա խառնարակ երևոյթ է, չէր կարելի։ Այսօրինակ պատահարների զլխաւոր հակասութիւնը նրանումն էր, որ ամպը շարունակ

կանգնած էր նոյն տեղը — և մնացած հարեան սարերը, որոնց թիւը անհամար է լուսնի վերայ, մնում էին պարզ — ոչնչով չբծածկուած: Շարքոննոն մեծ խնամքով չափեց այդ ամպի մեծութիւնը — նա միջին հաշուով պիտի ունենար 4-ից 7 վերստ լայնութիւն, իսկ այն խառնարանը, որի վերայ նկատեցին այդ ամպը — ունէր մի վերստ լայնութիւն: Եթէ այդ ամպը աչքախաբից է առաջանում — ապա պիտի եզրակացնել, որ լուսնի վրայ երևում են ինչ որ մէջեր և ամպեր. ուրեմն և կալ ջրալին դոլորչի, կալ ջուր, կալ և օդ, կան գործող հարադրութեան: Այս հանդամանքը շատ հետաքրքրեց աստղագէտներին և աշխատում են պարզել այդ կասկածելի երևութքը:

ՓՍՏՍԱԽՏ: Բենի համալսարանի ուսուցչապետ Կրիէն նկարագրում է մի տարօրինակ հիւանդութիւն, որին ենթակալ է շինութեան փալտը և որն առաջ են բերում մի քանի տեսակ բուսական պարազիտներ: Երևում է, որ այս ցատը շատ է տարածուած և նայելով նորա գործած աւերմունքներին — մեծ վտանգ է սպառնում: Ամենաշիմաւոր կերպով կարուցած շէնքսը, եթէ ունի փայտեղէն մասեր — կայծ ժամանակից լետտլ, շնորհիւ այդ պարապիտների դանդաղ — բալց անխոնջ գործունէութեան, վրում է: Այդ պարազիտների միջամենափտանդաւորը, իւր աւերիչ գործունէութեամբ, է merulius lacrimans, որ գրեթէ ամեն տեղ պատահում է: Այս բոպէին նա իւր կատաղի գործունէութիւնը տարածում է Մեյլուրն և Սիդնէի քաղաքներում, ուր նա ոչնչացնում է Նորվեգիայից ստացած սպիտակ եղնափալտը: Նա իւր լարձակումը գործել է Բոմբէյ, Յէլիոնի և Կալկաթայի զինուորանոցների, զինարանների և այլ փայտէ շինութիւնների վերայ: Նոյն այդ պարազիտը Միացեալ Նահանգներում ոչնչացնում է «pitch-pit» ծառը — որից պատրաստում են լատակի տախտակներ: Ռուսաստանում այդ պարազիտը մեծ վնաս է տալիս Բրեստ-Լիտովոյում, Էդլի կղզու վրայ և Սիբիրում:

1830 թ. — merulius lacrimans ր կատարեալ համաճարակի բնաւորութիւն ստացաւ Լեհաստանում: — Շատ ժամանակ չի անցել, որ նոյն պարազիտների շնորհիւ Պետերբուրգում մի քանի նորակառուց և թանկագին տներ փլուեցան, իրենց տակը թաղելով մի քանի մարդկալին զոհեր: Նորա աւերիչ գործունէութիւնը նկատուած է նոյնպէս Գերմանիայում, Իտալիայում, Աւստրո-Ունգարիայում և Չուէցիլիայում, — ուր նա աւերեց 1700 մետր բարձրութեան վերայ խիժափայտից շինած որտորղական անակները: Վերջերս երևացել է և Լոնդոնում, իսկ Ֆրանսիայում — համաճայն Կրիէի ուսումնասիրութեան, բացի այդ պարազիտից — նոյնանման վնաս է հասցնում փայտեղէն շինութիւններին և «physisporus raporarius» կոչուած պարազիտը: — Այս երկու պարազիտների աւերիչ գործունէութիւնը նկատուած է Փարիզի շատ թաղերում և ուրիշ քաղաքներում:

Վերջին ժամանակներս փախեղէնները ալդ թշնամիները կարծես աւելի ընտանեանալով քաղաքներից սկսել են այցելել գիւղերին. հեռագրասիւնների փշանալ վաղը ընկնելը, որ լաճախ մարդկային զոհեր ևս տանում է իւր հետ—կրիէլի կարծիքով պիտի վերագրել ղոցաւ Կժրաղտաբար նոցա հասցրած վնասը միայն վերը լինածը չէ—այդ պարագլիտը չի խնալում ոչ կահ կարասիք ոչ սպիտակեղէն և ոչ թուղթը—հետևապէս դա աչնպիսի մի շարիք է, որը դէմ պիտի կռուել:

Յիշեալ բուսական պարազիտների աւերել գործունէութիւնը անկասկած լալտնի է եղել շատ հին ժամանակներից ճարտարապետներին—բայց այն ժամանակ շատ սակաւ է տարածուած եղել իսկ այժմ մօտ 20 տարի կլինի, ինչ որ նոցա հասցրած վնասը աւելի և աւելի է լալտնի լինում: Փայտախոտ, կարելի է ալպէս ասել—քանի դնում աւելի և աւելի է տարածուած և մեծ հոգս պատճառելով շինութիւն անողներին: Այդ հիւանդութիւնը ներկալում շատ քիչ է ուսումնասիրած: Եթէ Ուսուցչապետ կրէլը—իւր շխորհուրդներ տանաէրերին և ճարտարապետներին գրքի մէջ շատ քիչ միջոցներ է առաջարկում—որ նա հիմնում է իւր արած փորձերի վերալ:

ԿՕՇԿԻ ՆԵՐԿՈՎ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՅԼԸ.—Մի քանի դէպքերի մասին տեղեկութիւն է հաղորդում բժշկապետ Կատերացը cl. Naturea ամսագրում և որովհետև ալդ դէպքերը լալտնի հանդամանքներում առաջացան, որոնցից հեշտ է խուսափել, ուստի ալդ զեկուցումը արժանի է ուղարկութեան: Վերջին ժամանակներս շատ են կարում կօշիկներ զեղնագոյն կաշուց, մանուանդ երեխաների համար, սակայն երեխանց ոտները մեծանում են և ամառուայ կօշիկները էլ միւս ամառ պէտք չեն զալլաւ Ուստի և կօշիկը սևացնում են, որ ձմեռն էլ պէտք չեն զալլաւ լինի: Սևացնում են կաշուի մէջ թափանցող սև «փփ» ներկով, որ և պատճառ է լինում այն դժբաղդ դէպքերի, որոնց մասին լալտարարել են դիտութեան շեմարանում բժշկապետները—Լանչինի և Բրուարդելը: Մի տաք դարնանալին օր, —ստում են նոքա—մեզանից մէկին խնդրեցին շուտախօլթ օգնութիւն հասցնել $1\frac{1}{2}$ տար. երեխային, որին ղրօսանքից չետ էին բերել անշնչացած դրութեամբ: Երեխան առաւօտը սովորական կերպով անցնելուց լետուլ, տարան ղրօսանելու պարտէզ, սակայն, նա աչնտեղ անշարժ էր, տիւուր և մինչև անգամ դէմքի գոյնը թռել կապտել էր: Կարծես սառել փախ էր դարձել, բայց ձայն չէր հանում, չէր լալլաւ—Նրբ ծմալը ը նորան լետ դարձրեց, նորա շրթունքները և մատները սառել կապտել էին—չնչառութեան բոլոր նշաններով: Բժշկութիւնը օգնեց, որ երեխան լետ եկաւ, բայց դրանից լետուլ նա կրկին երկու օր զանում էր անբնական դրութեան մէջ, սրբալի գործունէութիւնը սաստիկ խանգարուած: Որովհետև հիւանդանալը լանկարժակի էր, ուստի ենթադրում էր, որ նա թունաւորուած է, բայց թէ ինչից—չգիտէին: Բիշիկները ու-

չաղրութիւն դարձրին կօշիկներից եկող սաստիկ հոտի վերայ: Այդ կօշիկները առաջ դեղնագուն են եղել, այժմ ներկով սեւացրած:

Մի քանի օրից լետ նման դէպք պատահեց նոյն ընտանիքում մի ուրիշ երեխային, որից անկասկած կղրակացուեցաւ, որ թունաւորուելու պատճառը կօշիկներն են:—Այդ դէպքերը բացառիկ չէին. բժիշկները 12 նման դէպք հաղորդեցին, և բարեբաղտաբար ամեն անգամ հիւանդները լուացել էին:

Անխի՛նի ներկով թունաւորուելու երևոյթները ուսումնասիրելու համար Լանդուզին և Բրուարդելը մի շարք փորձեր կատարեցին կենդանիների վերայ: Նոքա անխի՛նի սև ներկը սրակեցին կենդանիների կաշուի տակ, կամ քսում էին նոցա կաշուին մաղի վերայ և կամ մաղը հեռացնելուց լետու: Նոքա հաստատեցին, որ երբ ներկը ծծուում է կաշուի մէջ—առաջ է բերում սաստիկ շնչարգելութիւն, որի զլլաւոր պատճառն այն է, որ արիան կարմիր դնդակներն սկսում են փոփոխուել: Այդ ներկը ծծուում է կաշուի մէջ, առաջ է բերում շնչարգելութիւն, որովհետև արեան կարմիր դնդակներն սկսել են փոխուիլ: Ներկի ծծուումը կաշուի մէջ աւելի արագ է կատարուել այն դէպքում երբ կենդանին գտնուում էր տաք փակուած սենեակում, ուրեմն վերոյիշեալ դէպքերում թունաւորուելու համար եղել են լարմար հանդամանքներ: Ի հարկէ սև անխի՛նի ներկ կարելի է պատրաստել այնպէս, որ նորա մէջ աղատ անխի՛նի չլինի, սակայն լաւ է խոյս տալ այդ ներկից և կօշիկները սեւացնելու համար գործածել սովորական կօշկաներով:

ՍԱՐԴԻ ՈՍԱՍԹԵԼԸ ԱՐԻԻՆԸ ԳԱԳԱՐԱՑՆԵԼՈՒ ՉԱՄԱՐ:

Ֆրանսիայում, ինչպէս, դժբախտաբար, նաև մեր երկրում, սխալ կարծիք է տարածուած, թէ վէրքից հոտող արևունը դադարեցնելու համար ամենալաւ միջոցն է սարդի ոտալնը: Ֆրանսիայում այն կարծիքի են, որ աւելի լաւ է եթէ ոտալնը վերցնեն ակտռներից: Այդ նախադաշարման դէմ պիտի մաքառել, որովհետև երկար ժամանակ կախուած ոտալնը օդից շատ միկրոբներ է ընդունում և շատ էլ ստանում է ճանձերից: Ատալնից շատ հեշտ է վարակուել, մանաւանդ երբ հին է:

Նորերս բժշկապետ Պելիւսը Փարիզի անասնաբուժական ընկերութեան մէջ հետեւեալ զեկուցումն արաւ: Մի ձի վիրաւորել էր ոտքը ցանկապատի ցցի վրայ. շտապել էին վէրքը կապել ոտալնով: Մի քանի օրից լետու վէրքի մօտ ոտը սաստիկ ուռաւ և երևաց, որ ձին ծաղիկ է ընկել: Անասնաբուժը լայանեց — որ վէրքը կապելու համար ոտալնը վերցրել են անպիտի ակտռից, ուր եղել են ծաղկով հիւանդ կովեր: Վարակման թոյնը ոտալնից անցել է ձիու վէրքի մէջ և վարակել: Ուստի և զբժարելիք իրաւունք ունի բացականչելու, որ եթէ հարկաւոր է ոտալնը հաւաքել — ալը պէտք է անել միայն ոչնչացնելու համար:

Ա. Ա.